Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 127-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում և 135-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի գ. ենթակետում «1-ին և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառերով:

Հոդված 3. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև 2024 թվականի հունվարի 1-ը Կառավարության հավանությանն արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների նկատմամբ Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում շարունակվում են կիրառվել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքի 121-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ կետով, 127-րդ հոդվածի 1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 135-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի գ. ենթակետով նախատեսված դրույթները: